

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՅՋԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԻԼ
ՍԱՅՄՈՆԻ «ԿՈՐՈՒՍՅԱԼՆԵՐԸ ՅՈՆՔԵՐՍՈՒՄ» ՊԻԵՍՈՒՄ

ԱՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆ,

Երևանի պետական համալսարան,

Էլ. **hauugt'** annie.nersesyan@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i44.50

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է «Կորուսյալները Յոնքերսում» պիեսը, որի հիմքում համամարդկային հույզերն են: Այս ընտանիքի պատմությունը ոչ ոքի անտարբեր չի կարող թողնել, այն ստիպում է նկատել, թե ինչպես աշխարհում տեղի ունեցած իրադարձությունը կարող է ներազդել սերունդների վրա և հակառակը, թե ինչպես անհատն իր ընտանեկան խնդիրներից, հոգսերից և սիրո պակասից դրդված կարող է վերաբերվել աշխարհին: Պատմությունը, իրոք, հուզիչ է, բայց Սայմոնի ձեռագրային առանձնահատկության շնորհիվ ընթերցողին չի համակում հուսահատություն, այլ հակառակը, յուրաքանչյուր էջ ողողված է նուրբ հումորով և որպես կուլմինացիա՝ ընտրված է խոր, հուզիչ և ուսուցողական վերջաբան, որտեղ սերը, ընտանեկան արժեքները, հավատը կյանքի, լուսավոր ապագայի նկատմամբ հաղթանակ են տանում և ըստ էության ստիպում անտեսել դժվարությունները:

Բանալի բառեր՝ պիես, ընտանիք, մանկություն, դժվարություններ, սեր և հոգատարություն, մարդկային հարաբերություններ, զգացմունք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սայմոնը ամենահաջողակ ժամանակակից ստեղծագործողներից էր, ում գործերը շատ են համակրում ընթերցողները և հատկապես թատերասերները:

The uncertainties, insecurity, instability and unhappiness which were the resultant consequences of his parents' tumultuous marriage and financial hardship caused by the Depression made him what he is today. Irrefutable is the fact that he was an accomplished comedy writer in American drama and the rate of his success was

phenomenal. He entertained his audiences with strings of comedies year after year. His comedies that were thin and fragile suited audiences perfectly and completely and so he was the success story – the Clyde Fitch – of the sixties and the seventies.

"Անկայունությունը և անվստահությունը, ոչ ստաբիլությունը և դժբախտությունը, որոնք հետևանքն էին իր ծնողների ցնցումային ամուսնության և ֆինանսական դժվարությունների, դարձրել են Սայմոնին այն, ինչ նա է այսօր: Անհերքելի է փաստը, որ նա կատարյալ կատակերգությունների հեղինակ էր ԱՄՆ-ում և իր հաջողության տոկոսը կատարյալ էր: Նա ամեն տարի մեկը մյուսի հետևից զվարճացնում էր իր հանդիսատեսին կատակերգությունների շղթայով: Նրա պիեսները, որոնք փոքր էին և փխրուն, կատարելապես էին համապատասխանում հանդիսատեսին և այսպիսով նրանն էր հաջողության պատմությունը 16-17 թվականներին", - գրում է Սայմոնը (Herzibah T. M., 2016):

Հումորի միջոցով հեղինակն անընդհատ բարձացնում էր իրեն հուզող հարցեր, որոնք առաջին հայացքից գուցե և թվային աննշան, ոչ շատ էական համաշխարհային խոշոր խնդիրների համեմատությամբ, բայց չէ՞ որ հենց փոքր խնդիրները, լուծում չստանալով, տեղավորվում են մարդկանց հոգիներում, ձևավորում տեսակ, ազդում ներմարդկային, ներընտանեկան շփման վրա, և հենց այս ամենից էլ ըստ էության ծնվում են շատ խոչընդոտներ: Թեև Սայմոնը՝ որպես հեղինակ, շատ հայտնի գուցե և չլինի հայ ընթերցողին, բայց նրա ստեղծագործություններին հայ մարդը վստահաբար ծանոթ է: Նրա ստեղծագործությունների վրա բեմադրվում են թատերական ներկայացումներ ոչ միայն Բրոդվեյում, այլ նաև Հայաստանում և ամբողջ աշխարհում, ու հանդիսատեսը աշխարհի տարբեր ծագերում նույն ոգևորությամբ տեսնում է ինքն իրեն բեմում, ծիծաղում է իր կյանքի, վախերի, թուլությունների վրա, հասկանում, թե իր խնդիրները միայն իրենը չեն, համամարդկային են, և, որ ամենակարևորն է, լուծելի են թվում: Թերևս հենց սա է հեղինակի հաջողության գաղտնիքն ինձ համար, հենց սա եմ ես տեսնում՝ նրա ստեղծագործություններն ընթերցելիս:

Գիտական աղբյուրներում քննարկվում են Նիլ Սայմոնի «Կորուսյալները Յոնքերսում» պիեսը, հեղինակի ձեռագրաբանությունը, կերպարների բազմազանությունը և արժեհամակարգային նմանություններն ու

տարբերությունները: Մի ընտանիքի օրինակով հեղինակը հստակ ցույց է տալիս բոլոր ընտանիքներում առկա խնդիրները և իհարկե առաջարկում լուծման բանալիներ. հենց այս ամենի վերլուծությանն ու բացահայտմանն է նվիրված այս աշխատանքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգվածի կարևորությունն այն է, որ ընթերցողին հնարավորություն տրվի ծանոթանալ կամ ամբողջությամբ ընկալել Նիլ Սայմոն հեղինակին, ծանոթանալ նրա ստեղծագործական լաբորատորիային: Քննարկելով գրողի ամենահուզիչ ստեղծագործություններից մեկը՝ ցանկացել ենք ցույց տալ հեղինակի և նրա գրական խոսքի խոր և բազմաբովանդակ լինելը: Այդ նպատակով փորձել ենք ներկայացնել Սայմոնին, ապա անրադարձել նրա «Կորուսյալները Յոնքերսում» պիեսին, տարրորոշել կերպարների կերտման հիմքերը և գալ հանգուցալուծման: Օգտագործել ենք վերլուծահամադրական մեթոդը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սայմոնի ստեղծագործություններն ինչքան էլ տարբեր են, միևնույնն է, ունեն ընդհանուր ձեռագիր, սերը ընտանիքի հանդեպ, բարությունը, հումորը, որից այն կողմ կարելի է կարդալ հիասթափության, վախերի, խնդիրների մասին, հենց հիմնաքարն է հեղինակի գրեթե բոլոր ստեղծագործությունների, բայց այս ամենի հետ ամեն մի ստեղծագործություն առանձին աշխարհ է, ու հենց ընթերցողի առջև մի ուրույն տարածք է բացվում: «Կորուսյալները Յոնքերսում» պիեսն իր մեջ այնքա՛ն ցավ ու միևնույն ժամանակ այնքա՛ն սեր է պարունակում: Իրադարձությունների կիզակետում մի ընտանիք է, որի անդամները շատ տարբեր են իրարից: Այս մարդկանց, այս ընտանիքի հոգեվիճակը մեզ հասկանալ օգնում են երկու փոքրիկ տղաներ, որոնց ճակատագիրը այնքան էլ չի ժպտացել հենց վաղ տարիքից: Տղաները՝ Ջեյը և Արթին, կորցրել են մորը, նրանց հայրը՝ Էդդին կանգնել է ծանր ֆինանսական խնդիրների առջև, քանի որ ամեն ինչ զոհաբերել էր կնոջ առողջության համար և կուտակելով շատ պարտքեր՝ չի հանձնվել ու չի կորցրել հավատը ապագայի նկատմամբ:

" The doctors, the hospital cost me everything I had, everything I didn't have and finally it cost me everything I was going to have"

"Բժիշկները, հիվանդանոցը, արժեցան այն ամենը, ինչ ես ունեի, այն ամենը, ինչ չունեի և իվերջո այն ամենը, ինչ երբևէ պատրաստվում էի ունենալ", - ասում է Էդդին (Simon N., 1993):

Դեպքերի զարգացմանը զուգահեռ՝ ընթերցողի համար բացվում և բացահայտվում է Էդդին՝ որպես ամուսին, հայր, եղբայր և վերջապես՝ որպես զավակ: Էդդին մանկության տարիներից սկսած շատ խնդիրների առջև է կանգնել, և միայն այդ ամենի խորքային ընկալումն է գրականագետներին օգնում նրան անվանելու ուժեղ անհատ: Նա, հասկանալով որ չի կարող կարճ ժամանակում վաստակել այն գումարը, որը զոհել է՝ կնոջ կյանքը երկարացնելու համար, վճռում է գնալ պատերազմ: Որոշման հետևանքն էլ հենց ստեղծագործությունը հասկանալու առաջին բանալին է, քանի որ երեխաները պետք է այդ շրջանում մնային իրենց տատիկի՝ Էդդիի մոր տանը, որտեղ նաև բնակվում էր հերոսի քույրը՝ Բելլան, ով ուներ որոշ առողջական և մտավոր խնդիրներ: Հայ ընթերցողը երևի առաջին հայացքից չի գտնի արտասովոր ոչինչ այս ամենում, սակայն հենց այստեղ էլ մենք բախվում ենք հերոսների առաջին ներանձնային կոնֆլիկտին: Տատիկն ունեցել էր դաժան մանկություն. հրեա երեխա, ով անցել էր Հոլոքոստի միջով և ողջ մնացել, տեսել է տարբեր դժվարություններ և որդեգրել է երեխաներին դաստիարակելու մի յուրօրինակ ձև. նրանց վերաբերվում է շատ սառը, աշխատում է չօգնել և հնարավորինս կոպիտ է, քննադատող և անհանդուրժող նրանց արարքների նկատմամբ, որն իր սրտով չէր: Միևնույն ժամանակ նա չէր սիրում աղմուկ, նախընտրում էր մենությունը. հենց այս տեսակային առանձնահատկությունները, միաձուլվելով այն փաստին, որ սկեսուրը չէր սիրել հարսին, Էդդին իր ընտանիքը հեռու է պահել նրանից. պատճառ է, որ տատը չցանկանա իր տանն ընդունել թոռներին: Էդդից պահանջվեց 1.5 ժամ. այդ ընթացքում նա փորձում էր համոզել մորը, թե ինչքան կարևոր է իր գնալը, և որ ինքն այլ ելք չունի, քան երեխաներին նրա մոտ թողնելը: Հետաքրքիր է, որ եղբայրները նույնպես չէին ցանկանում մնալ տատիկի մոտ, վախենում էին նրանից, բայց այլ տարբերակ չկար:

Ի հակադրություն մոր՝ Բելլան, գրկաբաց է ընդունում երեխաներին, հեշտությամբ ընկերանում է տղաների հետ և անգամ նրանց է վստահում իր գաղտնիքները՝ օգնության ու լավ խորհրդի ակնկալիքով: Բելլան շատ հալածանքներ

է կրել դեռ մանկության տարիներին թե՛ ընտանիքում և թե՛ դպրոցում: Հետաքրքիր է, որ Սայմոնը հենց Բելլային է համարում այս ընտանիքի փրկությունը. նա կարծես համադրել է անհամատեղելին. տեսել Բելլայի մեջ այն, ինչ ընթերցողը չէր էլ կարող պատկերացնել՝ ուժը և թուլությունը, իմաստությունը և մանկամտությունը, վախը և խիզախությունը: Հենց այս հերոսուհին է ընդունակ ամենախոր կերպով զգալու սեր, բարեկամություն, կարեկցանք հարազատի նկատմամբ: Նա հակված էր անել հնարավոր ամեն ինչ՝ տղաների առօրյան ավելի գեղեցիկ դարձնելու համար: Բելլան, ով օգնում էր մորը վարել տնտեսությունը և միևնույն ժամանակ աշխատում էր իրենց խանութում, շատ էր սիրում երբեմն գնալ կինոթատրոն, թեև հաճախ մոլորվում էր և կորցնում հետդարձի ճամփան: Հենց կինոթատրոնում էլ հանդիպում է մի երիտասարդի, ով նույնպես ուներ առողջական խնդիրներ, անգամ չէր կարողանում կարդալ: Նրանք սիրահարվում են, միասին ապագայի պլաններ են կազմում և որոշում կյանքի կոչել տղայի՝ սեփական ռեստորան ունենալու երազանքը, որի համար անհրաժեշտ գումարը Բելլան փորձում է խնդրել մորից՝ վստահ չլինելով, որ կստանա, թեև մայրն ուներ բավական գումար: Հենց այստեղ էլ սկսվում են հիմնական տարաձայնությունները մոր և դստեր միջև, որոնց միջոցով բացահայտվում է գործող անձանց ներաշխարհը:

Լուին՝ Էդդիի եղբայրը, առանձին էր ապրում, հանցագործ էր: Նա, հանդիպելով որոշ դժվարությունների, սկսել էր երբեմն այցելել մոր բնակարան, և տղաներին պատմում է իր և Էդդիի մանկության, իրենց տարբերությունների և առանձնահատկությունների մասին: Լուին շնորհակալ էր մորը, անընդհատ նշում էր, որ միայն դաժան դաստիարակության և իր տեսակային առանձնահատկության շնորհիվ է, որ ինքն այսօր այնպիսին է, ինչպիսին իրեն տեսնում ենք:

“Her eyes looked like two district attorneys... and Eddie couldn’t take the pressure. He’d always crack. Tears would start rollin’ down his cheeks like a wet confession...and Whack, he’d get that big German hand right across the head... But not me. I’d stare right back until her eyelids started to weigh ten pounds each...”

And you know what? She loved it... because I knew how to take care of myself... Yeah, me and Ma loved to put on the gloves and go the distance.”

“Նրա աչքերը նման էին երկու շրջանի իրավաբանների... և Էդդին չէր կարողանում

դիմանալ ճնշմանը: Նա միշտ կոտրվում էր: Արցունքները սկսում էին ընկնել իր այրերն ի վար՝ թաց խոստովանության նման... և ինչ, նա ստանում էր այդ մեծ գերմանական ձեռքից հարված հենց իր գլխին... Բայց ոչ ես: Ես նույնպես անդադար կնայեի, մինչև նրա աչքերից յուրաքանչյուրը կարծես տասը ֆունտի քաշ ունենար... Եվ գիտեք թե՞ ինչ: Նա էր հենց սիրում... որովհետև ես գիտեի ինչպես հոգ տանել իմ մասին... այո, ես և մայրիկը սիրում էինք ձեռնոցները հագնել և հեռուն գնալ",- պատմում է նա (Simon N., 1993):

Բելլան իր շուրջն է հավաքում ընտանիքի անդամներին՝ տղաներին, եղբորը՝ Լուիին և քրոջը՝ Գերթին, մորը, որ պատմի իր անձնական կյանքի մասին: Տղաները տեղյակ էին Բելլայի պատմությանը և հարցերի շնորհիվ փորձում են հեշտացնել նրա պատմության հիմնակետին հասնելու ընթացքը, որն էր ամուսնությունը և համատեղ կյանքը երիտասարդի հետ: Ընտանիքի անդամներն այդքան էլ չեն վստահում Բելլայի ընկերոջը, կասկածում են, որ նա արդար նպատակներ ունի՝ պնդելով, որ վերջինս կամ շատ խելացի է կամ էլ շատ տարօրինակ: Այստեղ էլ ընտանիքի անդամների միջև վեճ է սկսվում, և նրանք սկսում են ներկայացնել իրենց խնդիրները, պատմել հիշողություններ: Այս ժամանակ ընթերցողի համար ակնհայտ է դառնում, որ նրանցից յուրաքանչյուրը խնդիրներ ունի՝ Բելլան և քույրը՝ Գերթն առողջական, իսկ Էդդին և Լուին՝ հոգեբանական, թեև էմոցիոնալ առումով կոտրված էր այս ընտանիքի յուրաքանչյուր անդամ, և նրանցից յուրաքանչյուրի կյանքում դա արտահայտված էր յուրովի: Տղաները՝ Լուին և Էդդին դեռ փոքր տարիքից պայքարել են, դժվարություններ են հաղթահարել, կրել են բազում զրկանքներ, իսկ այդ ամենի հիմքում ընկած է եղել մոր դաժան վերաբերմունքը: Լուին պատմում է, որ ինքը խիզախ և անվախ երեխա է եղել, ապա Էդդին հակառակը, զգույշ էր և երբեք ոչինչ չի կոտրել, բացի ինքն իրենից: Սրանից կարելի է հասկանալ այն մեծ հոգեբանական բարդույթները, որոնց միջով անցել են եղբայրները, ու թեև նրանցից մեկի համար դա իր վախերը հաղթահարելու, ըմբոստանալու հնարավորություն էր, որի նպատակը հենց հետապնդում էր նրանց մայրը իր դաժան վերաբերմունքով, ապա մյուսի՝ Էդդիի համար այդ ամենը մղձավանջ էր: Լուին մի օրինակ է հիշում մանկությունից, երբ մայրը ստիպում էր տղաներին ուտել ապուրը, որը համեղ չէր: Էդդիին չէր հաջողվում իրեն ստիպել

ուտել այդ ապուրը, և նա ենթարկվում էր հալածանքների, իսկ եղբայրն ուտում էր՝ անկախ այն հանգամանքից, որ ապուրը սարսափելի էր՝ այսպիսով զրկելով մորը իրեն հաղթելու հնարավորությունից: Հեղինակն ընթերցողի առջև մերկացնում է հերոսների հոգիները՝ ցույց տալով սպիները, որոնք առաջացել են իրենք իրենց, իրենց ծնողի, ընտանիքի անդամների հետ ունեցած խնդիրներից, և այս ամենը հասցնում է նրան, որ հասարակության մեջ էլ հերոսները դժվարանում են գտնել իրենց կամ անընդհատ կռիվ են տալիս իրենց վախերի դեմ: Տղաները՝ Ջեյը և Արթին, զրկված էին շատ և շատ տարրական բաներից, ինչպիսիք էին խաղը, խաղալու իրավունքը, օտար էին իրենց հարազատ տատիկի տանը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ ամեն օր անհամբեր սպասում էին իրենց հոր վերադարձին, վերհիշում, որ, ըստ իրենց մոր պատմածների, իրենց հոր հարազատներից յուրաքանչյուրի կյանքում մի բան այն չէ, և որ այդ ամենի պատճառը տատիկն է, ով փոքր տարիքում անգամ արգելել է իր երեխաներին լաց լինել: Արթին, մի շրջան ապրելով տատիկի հետ, անգամ խնդրում էր հորեղբորը՝ Լուիին, որ տանի իր հետ, ուր որ գնում է, որովհետև ավելի վատ պայմաններ դժվարանում էր պատկերացնել: Բայց միևնույն ժամանակ նրանց երկուսի կյանքում գերիշխում էր սերը, և դա ամենևին էլ պատահական չէր, քանի որ նրանց մանկությունն անցել էր սիրո և հոգատարության մեջ: Հայրը՝ Էդդին, կատարյալ օրինակ էր սիրո, հոգատարության և անձնագրհուության, նա և կինը երբեք ոչ մի խնդրի մասին չեն խոսել երեխաների ներկայությամբ: Բայց միևնույն ժամանակ Էդդին հպարտ մարդ է, նա սովորեցրել է երեխաներին, ոչինչ չվերցնել ուրիշներից, անգամ իր մորից:

Eddie... Jay! Remember what I taught you about taking things from people?

Jay (He nods) Never take because you'll always be obligated.

Eddie So you never take for yourself... But for someone you love, there comes a time when you have no choice...

Էդդի... Ջեյ, հիշում ես՝ ի՞նչ եմ քեզ սովորեցրել մարդկանցից որևէ բան վերցնելու վերաբերյալ:

Ջեյ - (Գլխով է անում) Երբեք մի վերցրու, քանի որ դու միշտ պարտավորված ես լինելու:

Էդդի - Այսպիսով, երբեք պետք չէ վերցնել քեզ համար, բայց ոչ մեկի համար, ում

սիրում ես... երբեմն գալիս է ժամանակ, երբ դու այլ ընտրություն չես ունենում...
(Simon N., 1993):

Նա առանց տրտնջալու իր ամբողջ կյանքում աշխատածը, իր երեխաների ապագան ըստ էության դնում է իր կնոջ կյանքը գեթ մեկ օրով երկարացնելու հույսի մեջ. հույս, որը մեկ օր մարում է՝ թողնելով Էդդիին և երկու որդիներին ձեռնունայն:

"It was worth whatever it cost".

"Ինչ էլ որ լինեի դրա գինը, արժեք", - պնդում է նա (Simon N., 1993):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կյանքը լի է անակնկալներով, և դրանք ոչ միշտ են հաճելի, բայց հենց այդ անսպասելի ու անցանկալի իրավիճակներում է բացահայտվում մարդկային հոգու խորությունը: Էդիի մայրը՝ Տատիկ Կուռնիթզը, երիտասարդ տարիքում կորցրել էր իր երեխային, ապա նաև ամուսնուն, և այս ցավերը կուտակվել էին մանկության տարիներին կրած հալածանքներին և ավելի սառեցրել արդեն կարծրացած սիրտը: Մինչդեռ նրա որդին՝ Էդդին չի չարանում ո՛չ կնոջ նկատմամբ, ով իրեն մենակ թողեց, ո՛չ երեխաների, և որն ամենադժվար է, ո՛չ էլ աշխարհի նկատմամբ, չի փակում հոգու դռները մարդկանց, սիրո, կարեկցանքի, ընկերության առջև, փոխարենը հավատով է լցվում, հույս է տեսնում պատերազմում որպես զինվոր ծառայելու և անհրաժեշտ գումարը հնարավորինս արագ վաստակելու մեջ: Այս ամենի ուժը նրա՝ որդիների հանդեպ տածած անսահման սիրո մեջ է, սեր, որը նա իր ծնողից երբեք չի ստացել, կարեկցանք, որի կարիքն այդքա՛ն շատ է զգացել:

Այս ընտանիքի՝ իրարից բացարձակապես տարբեր անդամներին տրվում է հնարավորություն միանալու, մի հարկի տակ ապրելու, ավելի շատ տեսնվելու, կոնֆլիկտներ ունենալու, որի ընթացքում էլ յուրաքանչյուրն անկեղծանում է և բացում իր հոգում վաղուց կուտակված ու թաքցրածը: Բելլան արտահայտվում է, խոսում սիրո պակասի, մանկության խնդիրների, մարդկային հարաբերությունների կարևորության մասին, և հենց այս անկեղծ խոսքն է օգնում բացել տատիկի աչքերը, նրա մեջ կարծես հայտնաբերվում է սիրո նշույլ, որի մասին ինքն իրեն ստիպել էր մոռանալ և համոզել էր աշխարհին, որ իր մեջ սեր չկա: Վստահաբար ընթերցողն էլ չէր հավատա, որ այդ չար կինը, ով անգամ երեխաների հանդեպ հոգատար չէ, կարող է վերափոխվել, և հենց այստեղ է Սայմոնի ստեղծագործական

առանձնահատկությունը, հենց սա է նրա ստեղծագործությունների առաքելությունը՝ գտնել բարին, դուրս բերել սերը, միացնել հարազատներին, մոռանալ տալ հին վերքերը և միասին առաջ ընթանալ:

Հեղինակի ստեղծագործությունների, գրողին հատուկ առանձնահատկությունների, գրական ձեռագրաբանության, ժանրի, թեմատիկայի մասին ընթերցողը ըստ էության պատկերացում է կազմում կարդալով նրա պիեսները:

Թեև Նիլ Սայմոնի հերոսները շատ տարբեր են և բազմաշերտ, ունեն կերպարային առանձնահատկություններ, դժվար է նրանցից մեկին շփոթել մյուսի հետ, քանի որ հեղինակը նրանցից յուրաքանչյուրի համար առանձնահատուկ ճակատագիր է կերտել, կանգնեցրել խնդիրների առջև, որոնց նրանցից յուրաքանչյուրը բախվում է , և իր դժվարին ճանապարհն անցնում յուրովի, սակայն նրանք բոլորը կապված են միանման ճակատագրով՝ անցնել այդ փորձությունները պատվով և այդ ամենի արդյունքում հարստանալ մարդկային բարձր որակներով և դառնալ ավելի լավը իրենց, ընտանիքի, ընկերների, հասարակության և իհարկե ընթերցողի համար: Սայմոնը ցույց է տալիս, որ կա թունելի վերջի լույսը. դա սերն է, իրեն շրջապատող մարդիկ, դա նաև շփումն է: Պարզապես պետք չէ այս պիեսի հերոսուհու պես փակել սիրտը զգացմունքների առջև, որպեսզի այն պաշտպանես ցավից, հակառակը, ցավը պետք է վերապրել հարազատների հետ՝ լի հույսով և հավատով ապագայի նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Hepzibah T. Mary. (2016). Antidote for the Dehumanizing Effects Of War: A Reading Of Neil Simon's Biloxi Blues And Lost In Yonkers. *The Journal for English Language and Literary Studies*.

Simon N.. (1993). *Lost in Yonkers*. First Plume Printing.

REFERENCE LIST

- Hepzibah T. Mary.** (2016). Antidote for the Dehumanizing Effects Of War: A Reading Of Neil Simon's Biloxi Blues And Lost In Yonkers. *The Journal for English Language and Literary Studies*.
- Simon N.** (1993). *Lost in Yonkers*. First Plume Printing.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМЫ ЧЕЛОВЕЧЕСКИХ ЭМОЦИЙ И СЕМЕЙНЫХ ЦЕННОСТЕЙ В ПЬЕСЕ НИЛА САЙМОНА «ЗАТЕРЯННЫЕ В ЙОНКЕРСЕ»

АНИ НЕРСЕСЯН

В основе пьесы «Затерянные в Йонкерсе» лежат человеческие эмоции.

История этой семьи никого не оставляет равнодушным. Она заставляет думать о том, как события, происходящие в мире, могут воздействовать на поколения и наоборот, как личность, исходя из семейных обстоятельств и недостатка любви, может воспринимать окружающих.

Однако, благодаря непревзойденному перу Саймона, читатель не чувствует разочарования. Каждая страница пропитана тонким юмором. Кульминацией пьесы является глубокий, обучающий и трогательный эпилог, где побеждают любовь, семейные ценности и вера в светлое будущее, которая заставляет забыть о всех неприятностях.

Ключевые слова: игра, семья, детство, трудности, любовь и забота, человеческие отношения, чувство.

ABSTRACT

PROBLEMS OF HUMAN EMOTIONS AND FAMILY VALUES IN NEAL SIMON'S 'LOST IN YONKERS' PLAY

ANI NERSESYAN

The article discusses Neal Simon's 'Lost in Yonkers' play, where the human emotions are basics. The story of this family will not leave anyone indifferent: it makes notice how the previously happened events may affect generations and vise verse, like how a person may relate the world affected by his family issues, troubles and the lack of

love. The story is truly a touching one but Simon's specific writing style results the reader not to feel the despair, despite every page is full of soft humor also a deep, moving and teaching ending is chosen as a culmination, where love, family values and the hope towards life, bright future wins and makes forget about the bitterness.

Key words: play, family, childhood, difficulties, love and care, human relations, feeling.

Հոդվածը ստացվել է՝ 20.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 21.02.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 22.03.2023թ.